

ՄԵԾ ՏՕՆԻ ԿՅՏԱՐՈՒՄԸ

Կիրակի, հոկտեմբերի 14-ին Աղէքսանդրապօլի փողոցներն ընդունել էին տօնական կերպարանք:

Նախօրօք որոշւած ծրագրի համաձայն, այդ օրը ցերեկւայ հանդիսաւոր պատարագից յետոյ, տեղիս հայ դպրոցների աշակերտ աշակերտուհիները հանդիսաւոր գնացքով պէտք է անցնէին բոլոր դպրոցները և ամեն մի դպրոցում շնորհաւորական ձառեր արտասանէին տառերի գիւտի 1500 և տպագրութեան 400 ամեակի առթիւ:

Շնորհիւ տեղի ունեցած որոշման, այդ օրը Ս. Փրկիչ եկեղեցում կատրուեց հանդիսաւոր պատարագ, որից յետոյ նոյն եկեղեցուն կից դպրոցից սկսեց հանդիսաւոր գնացքը ղէպի միւս դպրոցները: Առջևից գնում էին համաքարներն իրանց դրօշակներով, զինւորական երաժշտական խումբը, բոլոր հայ ծխական և քաղաքային դպրոցների աշակերտներն ու աշակերտուհիները ուսուցիչների հետ միասին և ապա երկու սեփի բաղկացած բազմահազար ժողովուրդը: Ամեն մի դըպրոց ունէր իր սեփական դրօշակը, որոնց վրայ ի թիւս այլ մակադրութիւնների փողփողում էին ոսկէ տառերով գրւած «1500» և «400» պատկառելի թւերը: Բացի այս դպրոցական դրօ-

շակներէց, մանուկ ու պատանի դրօշակները տանում էին համեմատաբար աւելի անշուք ու փոքր դրօշակներ, որոնց վերայ մակագրւած էին դրօշակակիրներէ դասարանի անունը—«Ա. բաժանմունք» «Բ բաժին» և այլն:

Չնայելով անձրևային եղանակին հաղարաւոր ժողովուրդ սիրով շրջապատել էր հայ մտքի յաղթանակի կատարած այդ փառահեղ թափօրը. որը, ինչպէս ասացինք քիչ առաջ, դուրս գալով Ս. Փրկչի տղայոց դպրոցից բարձրացաւ Գրուզինսկայ փողոցը և իր առաջին այցելութիւնն արեց տեղիս Հայ—կաթողիկէների դպրոցին, ուր ս. Փրկչի տղայոց աշակերտները ողջոյնի ճառեր արտասանեցին իրանց ցեղակից ընկերներին, որոնցից, «մըրկաւ էին գատւած»:

Ամենապատիւ Հ. Ա. թանաս Աւետիսեանը մի զգացւած և գեղեցիկ ճառ արտասանեց, որից յետոյ, ինքն էլ միացաւ հանդիսաւոր գնացքին, որը անցնելով Կատօլիչեսկայա և Բօլշ. Սլաբօղսկայա փողոցներով, հասաւ Ս. Լուսաւորիչ երկսեռ դպրոցին:

Դպրոցի անշուք շէնքը զարդարւած էր դրօշակներով, գորգներով և ծառերի թարմ տերևներով, որոնց մէջ հազրւած էին Էանդուզական տօնի մեծ հերոսներ Ս. Մեսրոպի և Ս. Սահակի մեծադիր պատկերները: Շէնքի դռան առջև շինւած էր ամբիոն պատանի ճառախօսների համար: Ահա այստեղ բարձրացան և ողջոյնի ճառեր արտասանեցին Արղութեան օր. դպրոցի սանուհիներից երկուսը, իսկ պ. Բարայեանի խումբը երգեց տօնին վայել մի երկու երգեր:

Գնացքը յետ դարձաւ՝ և Թիֆլիսական Կարասկայա փողոցներից անցնելով կանգ առաւ քաղաքային I տղայոց դպրոցի առջև, ուր նոյնպէս արտասանեցին ողջոյնի ճառեր և շնորհաւորանքներ: Այդտեղից խոնւած բաղմութիւնը շրջապատած իր մանուկ սերնդին ոգևորւած երաժշտութեան քայլերգներից և մեծ տօնի պատճառած ոգևորութիւնից անցաւ Աղէքսանդրեան փողոցը և կանգ առաւ Սահականուշեան օր. դպրոցի առջև, որի շէնքը զարդարւած էր մի առանձին խնամքով ու ճաշակով: Դպրոցի հոգաբարձու պ. Ն. Կիրակոսեանը դպրոցի մուտքի մօտ դեմաւորեց հանդիսաւոր գնացքը. մանուկ ճառախօսները այստեղ էլ ողջոյնի ճառեր արտասանեցին և ցնծութեան աղաղակների ներդաշնակութեամբ գնացքը ուղղւեց դէպի Բէհրութեան փողոցը: Հասնելով գաւառապետի տան մօտ, որը կենում է Միքայէլեան և Բէհրութեան փողոցների անկիւնում, գնացքը կանգ առաւ իսկ երաժշտութեան խումբը նւագեց «Боже Царя Храни» ոուսաց ազգային հիմնը:

Կայսերական այս մախթանքի նւագումբը պ. գաւառապետը լսեց զինուորական սլափու բոնած, իսկ ժողովուրդը՝ զլիսաբաց, որին յաջորդեց հաղարաւոր աշակերտ-աշակերտուհիների երկարատե և սրտաբուղխ «ուռան»:

Այստեղից գնացքը Գեներալսկայա փողոցով հասաւ Արղութեան օր. միջնակարգ դպրոցին, ուր հանդիսաւոր թափօրին դիմաւորեց հոգաբարձութեան նախագահ պ. Աղ. Ամիրեան:

Մի երկու աշակերտ և աշակերտուհիներ խելացի և գեղեցիկ ճառեր արտասանեցին և ապա թափօրը ուղղւեց

այնտեղ, որտեղից սկսել էր իր հան-
դիսաւոր գնացքը:

Ժամը 3-ին զինւորական նւագա-
խմբի քայլերգներով վերջացաւ ուրախ
հանդէսը և հազարաւոր ժողովուրդը
գոհ և ուրախ հեռացաւ, օրհնելով այն
մեծ բարերարների յիշատակը, որոնց
շնորհիւ նա այսօր առիթ էր ունենում
տօնել իր քաղաքակրթական կեանքի,
իր մտաւոր հասունութեան և իր բա-
րոյական վերածնութեան մեծ և ան-
չնջելի տօնը:

Պետ. Մոճոռեանց
